ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՌԵՊՈՒԲԼԻԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

ԴԻՄՈՒՄԸ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ

Թանկագին ընկերնե՛ր:

Հայկական ՍՍՌ գիտական աշխատողների խորհրդակցությունը, քննարկելով գիտության աշխատողների համամիութենական խորհրդակցության արդյունքները և Հայաստանի գիտնականների խնդիրները, կապված ՍՄԿՊ XXII համագումարի հրավիրման հետ, միահամուռ հավանություն է տալիս ՍՄԿՊ Կենտկոմի և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի՝ ընկեր Ն. Ս. Խրուշչովի նախաձեռնությամբ ընդունած՝ «Երկրում գիտահետազոտական աշխատանքների կոորդինացումը և ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի գործունեությունը բարելավելու միջոցառումների մասին» որոշմանը, ինչպես նաև գիտական աշխատողների համամիութենական խորհրդակցության դիմումին:

Հայաստանի գիտնականներն այդ միջոցառումները դիտում են որպես Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության մշտական հոգատարության նոր դրսևորում հայրենի գիտության հետագա զարգացման նկատմամբ: Այդ հոգատարությունն անսահմանորեն ոգևորում է մեզ՝ սովետական գիտնականներիս և կոչում ստեղծագործական նոր հաջողությունների ի փառս մեր մեծ Հայրենիքի:

Մեծ են սովետական գիտության նվաճումները, գիտությունն, որն իրականացրեց մարդկության դարավոր երազանքը, բացեց ճանապարհը դեպի տիեզերք և աշխարհը գարմացրեց իր հրաշագործություններով:

Սովետական գիտության զարգացման գործում իրենց արժանի լուման են մտցրել Հայաստանի գիտնականները: Գիտության զարգացումը ռեսպուբլիկայում հասել է այն աստիճանի, որ ներկայումս Հայաստանում մշակվում են տարրական մասնիկների ֆիզիկայի, միջուկային ֆիզիկայի, տեսական ֆիզիկայի, աստրոֆիզիկայի, աստղաբաշխության, ռադիոֆիզիկայի, մաթեմատիկայի, հաշվողական տեխնիկայի, կիբեռնետիկայի, առաձգականության տեսության, պլաստիկության տեսության, հիդրոդինամիկայի և էլեկտրատեխնիկայի կարևոր հարցեր:

Մեր երկրաբանների ծավալած մեծ աշխատանքների շնորհիվ վերագնահատվել են բնական հարստությունների հին հանքավայրերը և հայտնագործվել նոր ու շատ հարուստ հանքավայրեր՝ հազվագյուտ և թանկարժեք մետաղների, նեֆելինային սիենիտների, քարաղի, տուֆերի, պերլիտների մեծ պաշարներով:

Ռեսպուբլիկայի քիմիկոսները հասել են զգալի արդյունքների անօրգանական քիմիայի, մասնավորապես սիլիկատների, [redacted]նական սինթեզի,

[redacted]

պոլիմերների քիմիայի, բիոլոգիական ակտիվ միացությունների, հազվագյուտ տարրերի քիմիայի բնագավառներում: Բիոլոգները աշխի ընկնող աշխատանք են կատարել ռեսպուբլիկայի բուսական և կենդանական աշխարհի ուսումնասիրման, ինչպես նաև բիոքիմիայի, բույսերի ֆիզիոլոգիայի, միկրոբիոլոգիայի, ռադիոբիոլոգիայի զարգացման ուղղությամբ:

Հասարակական գիտությունների աշխատողները լայն գործունեություն են ծավալել նայագիտության բոլոր ճյուղերի զարգացման ուղղությամբ:

Ուրախություն է պատճառում գիտական կադրերի աճը ռեսպուբլիկայում:

Մենք՝ խորհրդակցության մասնակիցներս, օրինական հպարտությամբ ենք նշում ՍՄԿՊ Կենտկոմի Առաջին Քարտուղար, ՍՍՌՄ Մինիստրների Սովետի Նախագահ Ն. Ս. Խրուշչովի այցելությունը Բյուրական և նրա հանդիպումը Հայաստանի մի խումբ գիտնականների հետ: Այդ հանդիպման ժամանակ ընկեր Խրուշչովը հանգամանորեն ծանոթացավ ռեսպուբլիկայի գիտնականների աշխատանքներին, խորացավ նրանց գործունեության մեջ և նոր, մեծ ու պատասխանատու խնդիրներ դրեց նրանց առջև: Այդ խնդիրները մենք պատվով կկատարենք:

Ընկերնե՛ր: Սովետական Հայաստանի գիտության աշխատողների խորհրդակցությունը տեղի է ունենում ՍՄԿՊ XXII համագումարի նախօրյակին՝ երկրում ստեղծված աշխատանքային և քաղաքական բարձր վերելքի պայմաններում: Բոլոր աշխատավորների հետ միասին ստեղծագործական մեծ լիցք են ստացել Սովետական Միության, ինչպես նաև մեր ռեսպուբլիկայի գիտության աշխատողները: Նրանք բաց գիտակցում են, որ կոմունիզմի կառուցման վեհ գործում պատվավոր դեր է պատկանում սովետական առաջավոր գիտությանը, սովետական գիտնականներին:

Մեզ ոգեշնչում է ՍՄԿՊ Կենտկոմի և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի՝ գիտական աշխատողների համամիութենական խորհրդակցությանն ուղղված նամակում գիտությանը տրված գնահատականն այն մասին, որ «Սոցիալիստական հասարակարգում գիտության զարգացումը պատմության մեջ առաջին անգամ հասցված է կարևորագույն համապետական խնդրի մակարդակին»:

Խորհրդակցության մասնակիցներս դիմում ենք Հայաստանի գիտության աշխատողներին և կոչ անում վերցնել նոր, ավելի բարձր պարտավորություններ՝ ի պատիվ հարազատ պարտիայի XXII համագումարի:

Պարտավորվում ենք ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների գծով զարգացնել ֆունկցիոնալ անալիզի, մաթեմատիկական լոգիկայի, տեսական ֆիզիկայի մաթեմատիկական մեթոդները և այլ ուղղություններ:

Մեխանիկայի բնագավառում առաձգականության, սողքի, պլաստիկության և անիզոտրոպ սալերի ու թաղանթների տեսության հետ մեկտեղ աշխատանք կատարել հիդրոմեխանիկայի, գազային դինամիկայի և մեխանիկայի այլ ճյուղերի ուղղությամբ: Լայն թափ հաղորդել հաշվողական տեխնիկայի և ժամանակակից կիբեռնետիկայի զարգացմանը:

Ծավալել թեորետիկական և էքսպերիմենտալ հետազոտություններ միջուկային և էլեմենտար մասնիկների, պոլիմերների, մետաղների, կիսահաղորդիչների ֆիզիկայի բնագավառներում:

Ռեսպուբլիկայի աստղաֆիզիկոսները կշարունակեն իրենց աշխատանքը աշ ստացիոնար աստղերի, գալակտիկայի միգամածությունների ասպարեզում:

Պետք է ծավալել աշխատանքներ ռադիոֆիզիկայի ու էլեկտրոնիկայի ուղղությամբ:

Նոր հետազոտություններ կկատարվեն օգտակար հանածոների գոյացման տեղաբաշխման օրինաչափությունների պարզաբանման ուղղությամբ՝ հատկապես մեր ռեսպուբլիկայի համար բնորոշ պղնձամոլիբդենային և կոլչեդանային հանքաբեր տեղամասերում, մշակել հագվագյուտ և ցրված էլեմենտների գոյացման, բաշխման օրինաչափությունները տարբեր տեսակի հանքանյութերում և կարևոր էլեմենտների արտազատման անհրաժեշտ մեթոդներ: Նորագույն գեոֆիզիկական մեթոդներով, լայնորեն ուսումնասիրել երկրի կեղևի խորային կառուցվածքը և լուծել մի շարք այլ թեորետիկ ակտուալ հարցեր:

Մշակել հիմնական տեսակի էներգիաների հայտնաբերման, հաղորդման և սպառման հիմունքները՝ կապված ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության վերելքի հետ:

Քիմիայի բնագավառում աշխատող գիտահետազոտական ինստիտուտների կոլեկտիվները պարտավորվում են ծավալել իրենց աշխատանքը սիլիկատների, սինթետիկ թելերի, խեժերի, ֆիզիոլոգիական ակտիվ նյութերի ստեղծման ուղղությամբ, զբաղվել ռեսպուբլիկայի հանքային հումքի բազայի վրա բարձրորակ ապակու, ապակե թելերի, շինանյութերի, պարարտանյութերի ստեղծման հարցերով:

Օրգանական քիմիայի բնագավառում աշխատանքները ծավալել մոնոմերների, պոլիմերների և օժանդակ նյութերի սինթեզի գիտական հիմունքների մշակման ուղղությամբ: Բազմակողմանի ուսումնասիրություններ կատարել նուրբ օրգանական քիմիայի բնագավառում՝ ֆիզիոլոգիական ակտիվ նյութեր ստանալու նպատակով, որոնք սերտորեն կապված են բժշկության. բիոլոգիային, գյուղատնտեսությանն առնչվող քիմիական պրոբլեմների լուծման հետ:

Բիոլոգիական գիտությունների բնագավառում մշակել տեսակների վերափոխման և ձևագոյացման հարցերը՝ կյանքի ու արդյունաբերության համար պիտանի բուսական, կենդանական ու միկրոօրգանիզմների նոր տեսակների ստեղծման ուղղությամբ. բույսերի, կենդանիների և միկրոօրգանիզմների հարմարողականության և փոփոխականության ֆիզիոլոգիական, բիոքիմիական ու մորֆոլոգիական հիմունքների մշակման հարցերը՝ կապված միջավայրի պայմանների հետ:

Շարունակել աշխատանքները գյուղատնտեսական կուլտուրաների, մասնավորապես խաղողի, պտուղների, տեխնիկական կուլտուրաների նոր, բարձր բերքատու տեսակների ստացման, կաթնատու և մսատու անասունների ցեղերի բուծման ուղղությամբ: Օգնել ռեսպուբլիկայի գյուղատնտեսության՝ ըստ գոտիների մասնագիտացման, նոր հողերի յուրացման, ոռոգման, մշակման և բերքահավաքի ռացիոնալ սիստեմների օգտագործման աշխատանքներին:

Մշակել ռեսպուբլիկայի ջրային ռեսուրսների կոմպլեքսային օգտագործման հիմունքները, կազմել միացյալ ջրային սիստեմների հեռանկարային սխեման և մշակել նրա ռեժիմների ղեկավարման մեթոդները:

Բժշկական գիտահետազոտական հիմնարկների աշխատողները պարտավորվում են մշակել շարորակ ուռուցքների դիագնոստիկայի, բուժման տարբեր մեթոդների ստեղծման և քիմիոթերապիայի, ճառագայթային հիվանդությունների առաջացման մեխանիզմի, կանխման և բուժման, սրտային հիվան-

դությունների վիրաբուժական և թերապևտիկ մեթոդների մշակման, կենտրոնական նервային համակարգի հետ կապված պաթոլոգիայի և նրա վերականգնման հարցերը:

Հասարակական գիտությունները կոչված են օգնելու կոմունիստական հասարակության մարդու դաստիարակմանը, պրոպագանդելու կոմունիստական աշխարհայացքը, պայքարելու բուրժուական իդեոլոգիայի, ռևիզիոնիզմի և ոեֆորմիզմի դեմ: Հայաստանի գիտնականները պարտավորվում են մշակել կոմունիզմի շինարարության, կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի և Արևելքի երկրների զարգացման պրոբլեմները, ազգային կուլտուրայի, պատմության, տնտեսության հարցերը, ավարտել և հրատարակել հայ ժողովրդի, նրա գրականության, արվեստի գիտական բազմահարուստ պատմությունը:

Տնտեսագետները պարտավորվում են լայնորեն զբաղվել ռեսպուբլիկայի տնտեսական զարգացման օրինաչափությունների և նրա վարման ավելի ռացիոնալ ձևերի մշակման հարցերով:

Հասարակական գիտությունների աշխատողները պարտավորվում են համարձակ և ստեղծագործական մոտեցում հանդես բերել կյանքի, մասսաների պայքարի փորձի նկատմամբ, համարձակորեն մշակել հրատապ տեսական ու գործնական հարցեր:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների աշխատողները պարտավորվում են է՛լ ավելի բարձրացնել գիտության և ժողովրդական տնտեսության համար պատրաստվող կադրերի որակը, ակտիվորեն մասնակցել գիտության զանազան ճյուղերի զարգացմանը, պատրաստել ազգային լեզվով նոր դասագրքեր և ձեռնարկներ:

Ընկերնե՛ր: Մենք դիմում ենք ձեզ՝ ռեսպուբլիկայի բոլոր գիտական աշխատողներին, կոչ անելով արժանավայել դիմավորել պարտիայի XXII համագումարը: Մեր ստանձնած պարտավորությունների հաջող կատարումը կապահովի գիտության մշտական կապը կյանքի, արտադրության հետ և գիտնականների ակտիվ մասնակցությունը մեր ռեսպուբլիկայի արտադրողական ուժերի հետագա բազմակողմանի զարգացման համար մղվող պայքարին:

Թանկագին ընկերնե՛ր: Դեպի ՍՄԿՊ XXII համագումարը մեր երկիրն ընթանում է նոր, ավելի մեծ հաջողություններով ժողովրդական տնտեսության, գիտության, տեխնիկայի և կուլտուրայի բոլոր բնագավառներում: Մեր պարտքն է, սրբազան պարտքը, ստեղծագործական աշխատանքով բազմապատկել այդ նվաճումները, մեր բոլոր ուժերը, գիտելիքները և ընդունակությունները ի սպաս դնել կոմունիզմի կառուցման մեծ գործին:

Կեցցե՛ սովետական առաջավոր գիտությունը:

Կեցցե՛ կոմունիզմ կառուցող սովետական ժողովուրդը:

Փա՛ռք մեր հարազատ Կոմունիստական պարտիային և նրա լենինյան Կենտրոնական Կոմիտեին: